ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԻՍԿՈՒՀԻ ՆԻԿՈԼԱՅԻ

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻՆ
(1988-1994 ԹԹ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Արցախի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աբրահամյան Հ.Բ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Պողոսյան Է.Վ.

պատմական գիտությունների թեկնածու Բարսեղյան Ի.Վ.

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. .հունիսի 17-ին ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

Թեմայի արդիականությունը: 1988թ. սկիզբ առած Արցախյան շարժումն ազգային զարթոնք էր, որը նոր էջ բացելով մեր պատմության մեջ, հանգեց ազգային ինքնագիտակցության դրսևորման գաղափարական և հոգևոր վերելքի: Արցախյան գոյապայքարի նոր փուլը համընկնում է գորբաչովյան «վերակառուցման» տարիների հետ՝ սկսած 1985 թվականից: Հռչակված «վերակառուցման» ընթացքում ազգային հարցին յուրահատուկ արժեք տրվեց և այն առաջին պլան մղվեց Արցախում, որտեղ պայքարը, ընդհանուր առմամբ, չէր դադարել: Ղարաբաղյան շարժման և, ընդհանուր առմամբ, արցախահայության ազգային-ազատագրական պայքարի ուշագրավ ու կարևոր առանձնահատկություններից էր կանանց զանգվածային և ակտիվ մասնակցությունը: Այս իրողությունը նկատվել է գրեթե բոլոր ուսումնասիրողների և դիտարկողների կողմից, սակայն, դրանով հանդերձ, չկա թեմային վերաբերվող պատմագիտական որևէ ուսումնասիրություն: Խնդրո առարկան գիտական հիմքերի վրա դնելը պատմագիտական անհրաժեշտություն է, քանի որ ուսումնասիրվող շրջանում կանանց գործունեության մասին շատ քիչ է անդրադարձ կատարվել:Հետազոտությունում փորձել ենք հանգամանորեն և ամբողջական տեսքով ներկայացնել, հնարավորինս մանրամասն վերլուծել կանանց կողմից իրականացրած կարևորագույն քայլերը, նրանց դերակատարությունը համազգային պայքարում:

Խնդրո առարկա ժամանակահատվածում դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանի կողմից իրականացվող բռնությունները կտրուկ սրել են իրավիճակը տարածաշրջանում, շեշտակի մեծացրել լարվածությունը և ղարաբաղյան հակամարտությունը փոխակերպել ռազմական առճակատման՝ պատերազմի: Այս ամենին միացած կանայք, եթե սկզբում հանդես էին գալիս որպես շարժման ակտիվ մասնակիցներ ու կազմակերպիչներ, ապա հետագայում պայքարը շարունակեցին արդեն ինքնապաշտպանական ուժերի շարքերում: Նրանց մի մասը մնալով թիկունքում՝ սատար կանգնեց հայրենի եզերքի պաշտպաններին:

Հետազոտությունն արդիական և հրատապ է, որովհետև հակառակորդ պետության՝ Ադրբեջանի հակաքարոզչության, ինչպես նաև հակամարտության դեռևս չլուծված պայմաններում ժամանակի հրամայականն է հայ ժողովրդի պատմագրության մեջ շտապ լրացնել բաց էջերը:

Խնդրո առարկա թեման հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանի ուսումնասիրության գործում որոշակի ավանդ ներդնելու փորձ է:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Հետազոտության գլխավոր նպատակն է ներկայացնել հայ կնոջ, առհասարակ կանանց մեծաթիվ և բուռն մասնակցությունը Արցախի ազգային-ազատագրական պայքարին: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

1. դիտարկել ստեղծված իրավիճակում կանանց նախաձեռնությունները.
2.վերլուծել համաժողովրդական պայքարում կանանց գործունեությունը և դերակատարությունը.
3.բացահայտել նրանց կրած զրկանքները գոյապայքարի տարիներին, մանավանդ՝ Սումգայիթյան սպանդի, Բաքվի և Ադրբեջանի մնացած քաղաքներում կազմակերպված ջարդերի, ինչպես նաև Մարաղայի կոտորածի ժամանակ.
4.հատկանշել միջազգային ասպարեզում հայկական կողմին սատարող կին քաղաքական գործիչների ու մտավորականների դերը.
5.վեր հանել կանանց հասարակական-քաղաքական գործունեությունն ազգային-ազատագրական պայքարի ժամանակ.
6.բացահայտել ԼՂՀ կազմավորման գործընթացում կանանց ցուցաբերած ակտիվ և վճռական քայլերը.
7.ստույգ փաստերի համադրման եղանակով լուսաբանել ազատամարտում կին կամավորականների անցած մարտական ուղին:

Հետազոտության մեթոդական հիմքը: Ատենախոսությունը շարադրվել է պատմահամեմատական և պատմաքննական մեթոդների կիրառմամբ: Դրա շնորհիվ իրականացված ուսումնասիրությունը համակողմանի պատկերացում է տալիս կանանց դերակատարությանը Արցախի ազգային-ազատագրական պայքարում: Հետազոտությունում շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է գլխավորապես թեմատիկ սկզբունքով:

Գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը: Ընդհանրացնելով ատենախոսության մեջ լուսաբանված պատմագիտական նորույթ հանդիսացող հիմնախնդիրների հնարավորինս համառոտ ներկայացումը՝ կարող ենք կրկին որոշակիորեն արձանագրել, որ հետազոտության հիմնական անվիճելի գիտական նորույթը կանանց դերակատարությունը ազատագրական պայքարում ամբողջական ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, որը կատարվում է առաջին անգամ:

Մեր հետազոտությամբ փորձ է արվում համակողմանիորեն վեր հանել համազգային պայքարի ընթացքում կանանց կատարած աշխատանքները՝ սկսած ընդհատակյա փուլից, ներկայացնել ակտիվ գործունեությունը համաժողովրդական շարժման ընթացքում, հատկանշել նրանց նախաձեռնությունները հասարակական-քաղաքական ոլորտներում, ինչպես նաև վեր հանել մարտական գործողությունների ժամանակ կանանց մասնակցությունը՝ դրանցից դասեր առնելու նպատակով:

Ատենախոսության արդյունքում ձևավորված նյութը հնարավորություն է տալիս ըմբռնել կանանց դերի առանձնահատկությունները: Ատենախոսությունը ունի կիրառական և ճանաչողական նշանակություն, քանզի հետազոտության արդյունքները, անկասկած, պահանջված են հայ ժողովրդի նորագույն շրջանի պատմության, մասնավորապես արցախյան գոյապայքարի պատմությունը ուսումնասիրողների կողմից, ինչպես նաև կարող են օգտագործվել բուհական

ծրագրերում, թեմատիկ դասախոսությունների, հատուկ դասընթացների նախապատրաստման, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ գրելիս:

Հետազոտության ժամանակագրական սահմանները: Հաշվի առնելով ատենախոսության նպատակներն ու խնդիրները, որպես մեկնակետ ընտրվել են 1988 թվականից մինչև 1994 թվականի գարուն ընկած ժամանակահատվածը, որը պայմանականորեն բաժանել ենք երկու շրջանի. 1) 1988-1991թթ. դեկտեմբեր, 2) 1992թ. հունվար-1994թ. մայիս՝ նկատի ունենալով կանանց գործունեությունը համաժողովրդական պայքարի ժամանակ և նրանց մասնակցությունը ռազմական գործողություններին:

Ատենախոսության գործնական փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել ու հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Արցախի պետական համալսարանի պատմության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրապարակած հոդվածներում:

Աղբյուրների և գրականության տեսություն: Թեմայի գիտական լուսաբանման համար օգտագործված արխիվային նյութերը նոր լույս են սփռում հիմնահարցի բազմաթիվ հարցերի վրա: Աշխատության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել խնդրին վերաբերվող ՀՀ Ազգային, ԼՂՀ պետական և շրջանային արխիվների բազմաթիվ նյութեր:

Ուսումնասիրության պատմաքննական վերլուծության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) առկա փաստական նյութերը: Բավականին հարուստ տեղեկություններով աչքի են ընկնում թիվ 1 ֆոնդում զետեղված նյութերը՝ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի կանանց խորհրդի, Ղարաբաղի մետաքսի կոմբինատի աշխատավոր կանանց, Շահումյանի կուսշրջկոմի 3-րդ քարտուղար Էլմիրա Դանիելյանի դիմումները՝ Խորհրդային Միության իշխանություններին, ինչպես նաև մի շարք կին-ակտիվիստների հեռագրեր, նամակներ՝ ԼՂԻՄ-ի հարցը արդարացի լուծելու խնդրանք-պահանջով: Ուշագրավ է թիվ 207 ֆոնդում պահպանված «Հայ կանանց միաբանության» 1989թ մայիսի 16-ի դիմումը՝ ուղղված ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ կոնկրետ միջոցառումներ իրականացնելու պահանջով: Իրենց աղբյուրագիտական արժեքով կարևորվում են նաև ՀԱԱ թիվ 1678 ֆոնդում պահպանված նյութերը:

Կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն նաև ԼՂՀ պետական և շրջանային արխիվներում պահպանված բազմաթիվ արժեքավոր փաստական նյութեր, վավերագրեր, այդ թվում՝ շրջանային ու մարզային ատյաններին, Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ բարձրագույն ղեկավար մարմիններին և ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությանն ուղղված հանրագրեր՝ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու խնդրանք-պահանջով, որոնցում առկա են հարյուրավոր կանանց ստորագրություններ: 1988-1990թթ. իրադարձությունների վերաբերյալ մեծարժեք նյութեր կան պահված ԼՂՀ պետական արխիվի թիվ 1, 2,

254 ֆոնդերում, որոնք հիմնականում վերաբերվում են բազմամարդ ցույցերում կազմված նամակներին, հեռագրերին, խնդրագրերին, տարբեր հասարակական կազմակերպությունների, կոլեկտիվների, ժողովրդական պատգամավորների դիմումներին:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել ԼՂՀ շրջանային արխիվների բազմաթիվ կարևոր փաստաթղթեր, որոնք վկայում են շրջանների կանանց դերը համաժողովրդական պայքարում:

Իրենց աղբյուրագիտական արժեքով կարևորվում են Ասկերանի շրջանային արխիվի նյութերը, հատկապես թիվ 1 ֆոնդի գործերից առանձնանում է 1988թ. փետրվարի 18-ին շրջանային խորհրդի մի խումբ պատգամավորների, այդ թվում՝ 15 կին-պատգամավորների մասնակցությամբ կազմված դիմումը, որն ուղղված էր շրջխորհրդի գործկոմին՝ շրջանային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու խնդրանքով: Նույն ֆոնդում պահպանվել են շրջանի գյուղերի կանանց ստորագրությամբ մի շարք դիմումներ, հեռագրեր՝ ուղղված բարձրագույն ատյաններին:

Սկզբնաղբյուրների շարքում կարևոր արժեք ունեն նաև Հադրութի շրջանային արխիվի թիվ 1 ֆոնդում պահպանվող մի շարք փաստաթղթեր՝ կանանց մասնակցությամբ նախաձեռնող խմբի դիմումներ, ինչպես նաև կանանց նախաձեռնությամբ կազմված հանրագրեր:

Աղբյուրագիտական նշանակություն ունեն նաև Մարտունու շրջանային արխիվի նյութերը, հատկապես թիվ 1 ֆոնդում պահպանված նյութերը, որոնց մեջ ուշադրության է արժանի 1988թ. փետրվարին ժողովրդական պատգամավորների Մարտունու շրջանային խորհրդի մի շարք պատգամավորների, այդ թվում՝ կին-պատգամավորների նախաձեռնությամբ կազմված դիմումը՝ արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով, ինչպես նաև կանանց մի շարք նամակներ, դիմումներ:

Թեմայի ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել նաև ԼՂՀ Պաշտպանության նախարարության, ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվներում պահվող, ինչպես նաև ԼՂՀ ԱԳՆ մամլո ծառայության նյութերը:

Ուսումնասիրության մեջ, մասնավորապես, օգտագործվել են վավերագրական ֆիլմեր, որոնցում նկարագրված են հանրահավաքներ և հարցազրույցներ շարժման կազմակերպիչների, ազատամարտիկների հետ[1]: Դրանք կարևոր սկզբնաղբյուր են 1988-1994թթ. Արցախի պատմության համար:

Արցախյան գոյապայքարում կանանց մասնակցության վերաբերյալ հարուստ նյութեր են պարունակում հայ և ռուսալեզու մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածներ ու հրապարակումներ, ականատեսների վկայություններ,

[1] Արցախի հանրային հեռուստաընկերության արխիվ, փաստավավերագրական ֆիլմեր՝ «Թերթելով պատմության էջերը», «88-ի արձագանքները», սկավառակ (ռեժիսոր՝ Ավետիսյան Հ., հեղինակ՝ Բաղրյան Վ.):

ընդհանրացումներ ու գնահատականներ: «Ազատ Արցախ», «Արցախ», «Արցախի համալսարան», «Ամարաս», «Բերդ», «Դիզակ», «Երկիր», «ԼՂ Հանրապետություն», «Խորհրդային Ղարաբաղ», «Խորհրդային Հայաստան», «Հայաստան», «Հայաստանի Հանրապետություն», «Հայ զինվոր», «Հայրենյաց պաշտպան», «Մարտիկ», «Մռովի ղողանջներ», «Շարժում-88», «Ուրբաթ», «Բակինսկիյ րաբոչիի», «Գոլոս Արմենիի», «Ձով Արցախա», «Իզվեստիա», «Ինֆորմկուրանտ», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Կոմերսանտ», «Կրասնայա զվեզդա», «Պրավդա» և այլ թերթերում տպագրված բազմաթիվ հոդվածներ վկայում են համազգային պայքարին կանանց մեծաթիվ մասնակցության մասին: Ռուսական մամուլը հատկապես մանրամասն բացառիկ տեղեկություններ է հաղորդել 1991թ. օգոստոսին «Օղակ» ռազմագործողության ժամանակ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի «Փառանձեմ» ջոկատի մասնակցությամբ տեղի ունեցած մի կարևոր միջադեպի մասին, որի ժամանակ պատանդ վերցված ռուս զինվորներին ազատելու դիմաց հաթերքցի կանայք պահանջում էին բանտերից ազատել 15 հայորդիներին: Չնայած այդ նյութերում անկողմնակալությունը հիմնականում բացակայում է, սակայն որոշ վկայություններ լսելի են միայն այս աղբյուրներից: Հարկ է նշել, որ խորհրդային մամուլի անդրադարձների նկատմամբ ցուցաբերվել է քննադատական մոտեցում:
Հիմնահարցի մասին աղբյուրագիտական կարևոր նյութեր են պարունակում նաև փաստաթղթերի մի շարք ժողովածուներ[2]:

Հետազոտության համար կարևոր նշանակություն են ունեցել նաև մի շարք հեղինակների հուշագրություններ, օրագրություններ ու փաստագրություններ, որոնց շնորհիվ բացահայտվել են հիշյալ ժամանակահատվածում կանանց գործունեությունը:

Ուսումնասիրվող թեմայի լուսաբանման համար առաջնահերթ բացառիկ կարևորություն ունեն Հ. Վարդումյանի աշխատանքները[3], որոնցում բացառապես առաջին անգամ ներկայացված են կին ազատամարտիկները, ովքեր որպես կապավոր, բուժքույր ու զինվոր մասնակցել են մարտական

---

[2] Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991-1992թթ), փաստաթղթեր, (կազմող՝ Աբրահամյան Հ.), Երևան, 2011: Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, (կազմողներ՝ Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ.), Երևան, 2011: Պատմական նստաշրջան, ԼՂԻՄ Ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանի 1988թ. փետրվարի 20-ի նիստի արձանագրություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Բալայան Վ., Հակոբյան Տ.) Ստեփանակերտ, 2008: Итоги всесоюзной переписи населения 1989г. Численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2, Москва, 1989. Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах (сост. Товмасян В., Атаджанян В., Нерсисян Ю., Балаян В.) Степанакерт, 1991.

[3] Վարդումյան Հ., Կին ազատամարտիկները, Երևան, 2003, Ճանապարհ անմահության, Երևան, 2002, Աստվածների կանչը, Երևան, 2004:

գործողություններին: Հեղինակն իր ուսումնասիրությունների մեջ փորձել է ներկայացնել ոչ միայն կին-ազատամարտիկների մարտական ուղին, այլև նրանց կենսագրությունները:

Հետազոտության հիմնական սկզբնաղբյուրներից է «Կինը և զինված հակամարտությունը: Պատերազմ Ղարաբաղում» ուսումնասիրությունը[4], որտեղ պատումների տեսքով արժևորվում է Արցախյան ազատամարտին մասնակից մի շարք կանանց գործունեությունը:

Աղբյուրագիտական մեծ արժեք ունի «Հայուհիներ» հանրագիտարանը[5], որում տրված է կին գործիչների կենսագրությունը, ներկայացված են կին-ազատամարտիկները, ինչպես նաև նրանց գործունեությունը հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում: Չնայած համազգային պայքարին մասնակից քիչ թվով կանայք են ներկայացված, այնուամենայնիվ, այն լուրջ ներդրում է պատմագիտության ասպարեզում:

Արժեքավոր ու ամփոփ ուսումնասիրություն է «Ղարաբաղի ազատագրական պատերազմ 1988-1994 թթ. հանրագիտարանը»[6], որտեղ ոչ միայն տրված են Արցախյան հերոսամարտի մասնակիցների կենսագրականներ, այլև ռազմական գործողությունների ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև Արցախյան շարժման սկզբնավորման պատմությունը: Առանձին ներկայացված է նաև կին գործիչների մասնակցությունը ազատամարտին: Աշխատությունն առաջին փորձն է և կարող է օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների համար, սակայն այն զերծ չէ թերություններից՝ մարդկանց, գործողությունների ամբողջական ընթացքի նկարագրության, շատ մասնակիցների անունների բացակայության տեսակետից:

Հարկ է նշել, որ ատենախոսության մեջ մի շարք կին-ազատամարտիկների ներկայացրել ենք պարբերական մամուլում՝ վկաների հրապարակած տվյալներով, որոնց չեն անդրադարձել թեմային առնչվող աշխատանքների հեղինակները:

Խնդրո թեմայի լուսաբանման համար կարևոր են հրապարակված այն պատմագիտական աշխատությունները, որոնցում հակիրճ տեղեկություններ կան ազատագրական պայքարի տարիներին կանանց գործունեության վերաբերյալ: Այդ առումով հատկանշական է Բ. Ուլուբաբյանի աշխատությունը[7]: Այն խիստ արժեքավոր ուսումնասիրություն է, որ պարունակում է ականատեսի վկայություններ, դեպքերի և իրադարձությունների վերլուծություններ: Ղարաբաղյան շարժման տարեգիրը հանրահավաքներին մասնակից կանանց մասին ոչ միայն

---

[4] Կինը և զինված հակամարտությունը, պատերազմ Ղարաբաղում (խմբագիրներ՝ Մխիթարյան Ա., Օհանյան Մ.), Երևան, 2000:

[5] Հայուհիներ, հանրագիտարան, հատոր 1, Երևան, 2011:

[6] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, հանրագիտարան, Երևան, 2004:

[7] Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:

իր տպավորություններն է կիսում, այլև վեր հանում հայ ժողովրդին սատարող օտարազգի կին գործիչների նախաձեռնությունները, նրանց կատարած քայլերը: Աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն Արցախի հիմնահարցի ակունքների բացահայտմանն ու վերլուծությանը նվիրված Հ. Աբրահամյանի մի շարք աշխատություններ[8]: Հեղինակը, հենվելով հիմնականում նորահայտ փաստաթղթերի, վիճակագրական տվյալների և այլ պատմագիտական նյութերի վրա, ուսումնասիրել և գիտականորեն ընդհանրացրել է Արցախի ազատագրական պայքարի նախադրյալները, դրա սկզբնավորումը, պայքարի շուրջ հայության համախմբման ու տարած հաղթանակների արդյունքները և համառոտ անդրադարձել նաև այն կանանց, որոնք մասնակցել են ընդհատակյա աշխատանքներին, ընդգրկվել Մոսկվա մեկնող պատվիրակությունների կազմում, ելույթ ունեցել հանրահավաքներում, մասնակցել ազատամարտին:

Հյուսիսային Արցախի գոյապայքարի պատմությանը նվիրված Կ. Ղահրամանյանի մենագրություններում[9] անդրադարձ կա ԼՂԻՄ մարզային խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի պատմական որոշումից հետո Լեռնային Ղարաբաղում ծավալված իրադարձություններին, որոնք լայն արձագանք գտան Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում: Հեղինակը հիմնականում սահմանափակվել է Արցախյան շարժման հետ սերտորեն կապված Հյուսիսային Արցախում տեղի ունեցած իրադարձությունների լուսաբանմանը, թռուցիկ անդրադարձել դեպքերի մասնակից կանանց, հատկապես բուժաշխատողներին:

Աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունի Բ. Սիսյանի և Ռ. Չիլինգարյանի համատեղ աշխատությունը[10], որտեղ լուսաբանված են նաև Գետաշենի 1988-1991թթ. դեպքերը, ինչպես նաև համառոտ տվյալներ կան կանանց վերաբերյալ:

Ականատեսի վկայություններ են Վ. Բաղրյանի աշխատանքները[11], որոնցում իրական փաստերի հիման վրա ներկայացված է Արցախյան ազատամարտը՝ խաղաղ ցույցերից մինչև զինադադար, և որոնցում հեղինակը անդրադարձ է կատարել հանրահավաքներում հնչած կին ակտիվիստների ելույթներին, առանձին ներկայացրել ռազմական գործողություններին միացած կանանց հետ ունեցած հարցազրույցները, անդրադարձել միջազգային ասպարեզում հայկական կողմին համակրող ու սատարող կանանց:

Աղբյուրագիտական արժեք ունեն փաստերով հարուստ նյութեր պարունակող մի շարք ծավալուն աշխատություններ, որոնցում դիտարկվում է

---

[8] Աբրահամյան Հ., Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, 1997, Մարտնչող Արցախը, հատոր Գ. Երևան, 2007, Մարտ կրակագծի մատույցներում , Երևան, 2008, Կռունկ, Ստեփանակերտ, 2013:

[9] Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ,գիրք Բ. Երևան, 1993, Օջախի գիրք. Հողը կանչում է, գիրք Բ, Երևան, 2005:

[10] Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ., Գետաշեն, Երևան, 2007:

[11] Բաղրյան Վ., Ֆենոմեն, Ստեփանակերտ, 1998 : Տե՛ս նաև Տեսադաշտ 1988-1994, Ստեփանակերտ, 2013:

ազգային-ազատագրական պայքարը և որոշակի չափով տեղեկություններ են հաղորդվում նաև դրան մասնակից դարձած կանանց մասին: Նման աշխատանքների թվում են Վ. Խոջաբեկյանի[12], Կ. Դանիելյանի[13], Գ. Առստամյանի[14], Ա. Արշակյանի[15], Ս. Կապուտիկյանի[16], Հ. Բեգլարյանի[17], Թ. Հակոբյանի[18] և մի շարք այլ հեղինակների աշխատանքները:

Փաստերով հագեցած նյութեր են պարունակում մի շարք օտարազգի հեղինակների՝ հատկապես Ա. Սախարովի[19], Ի. Բուրկովայի[20], Թ. դե Վաալի[21] և այլոց աշխատանքները: Վ. Կրիվոպուսկովն իր աշխատանքում[22] փաստա-վավերագրական ճշմարտությամբ ներկայացնում է «Օղակ» ռազմական գործողության ժամանակ հայերի նկատմամբ կատարված բռնությունները, այնուհետև համառոտ տվյալներ հաղորդում ինքնապաշտպանությանը մասնակից կանանց մասին:

Քննության առարկա հիմնախնդրին այս կամ այն չափով առնչվել են Զ. Բալայանը[23], Ռ. Ազիզբեկյանը[24], Ռ. Պետրոսյանը[25], Մ. Աղաջանյանը[26] և ուրիշներ: Նշված հեղինակները, քննության առնելով Արցախի ազգային-ազատագրական պայքարը, թռուցիկ անդրադարձել են նաև կանանց:

Հայության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների իրագործած բռնություններին, ջարդերին, հատկապես կանանց հանդեպ ցուցաբերված կոպտություններին փաստերով, վկայությունների տեսքով անդրադարձել են մի շարք հեղինակներ: Այս տեսակետից կարևոր են Ի. Մոսեսովայի և Ա. Հովնանյանի[27], Ս. Շահմուրադյանի[28], Ք. Քոքսի ու Ջ. Այբերի[29] և այլոց

---

[12] Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:

[13] Դանիելյան Կ.,Արցախ չսանձված նժույգ, Երևան, 2001:

[14] Առստամյան Գ., Սպասում, Ստեփանակերտ, 1996, Իմ պատիվ, իմ ցավ Ղարմետաքսկոմբինատ, Ստեփանակերտ, 2010: Տե՛ս նաև Իմ սերը ձեզ հետ է ողջեր և նահատակներ, Երևան, 1998:

[15] Արշակյան Ա., Արցախյան գոյապայքար (1985-1992 թթ.), Երևան, 2004:

[16] Կապուտիկյան Ս., Էջեր փակ գզրոցներից, Երևան, 1997:

[17] Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ղարաբաղյան շարժում, գիրք Գ., Ստեփանակերտ, 2006:

[18] Հակոբյան Թ., Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008:

[19] Сахаров А., О Нагорном Карабахе, Ереван, 1996.

[20] Буркова И. , Геноцид карабахских армян, Рязань, 1995.

[21] Де Ваал Томас , Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, Москва, 2014.

[22] Кривопусков В., Мятежный Карабах , Москва, 2007.

[23] Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Երևան, 1995:

[24] Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992:

[25] Պետրոսյան Ռ., Արցախ, Պատերազմ, Զինադադար, Երևան, 2001, Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, 1997:

[26] Աղաջանյան Մ., Հաթերք, Ստեփանակերտ, 2012:

[27] Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992:

աշխատանքները: Ք. Քոքսը, լինելով ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման կողմնակից, բազմիցս հատուկ զեկույցներով հանդես է եկել աշխարհի տարբեր ամբիոններից: Ք. Քոքսը և Ջ. Այբերը արցախյան հիմնախնդրը, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունը և նրա պատերազմական փուլը դիտարկել են Թուրքիայի, Իրանի և Ռուսաստանի հակասական շահերի համատեքստում, «Էթնիկ զտում» անվանել ԽՍՀՄ-ի և Ադրբեջանի կողմից իրականացված «Օղակ» ռազմագործողությունը:

Ատենախոսության հիմնախնդրի լուսաբանման առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև մի շարք այլ ուսումնասիրություններ[30]:

Ատենախոսության մեջ ազատագրական պայքարին մասնակցած ոչ բոլոր կանայք են ներկայացվել՝ նրանց մասին տեղեկությունների բացակայության պատճառով:

Վերը ներկայացված աղբյուրագիտական և պատմագիտական աղբյուրների առկայությունը հնարավորություն է տվել լուսաբանելու քննության առարկա խնդիրը, որը համալրել է պատմագրության մեջ որոշակիորեն բաց մնացած էջերը:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք բաժանված են երեքական

---

[28] Шахмурадян С., Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, Ереван, 1989.

[29] Кокс К., Айбнер Д., Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998:

[30] Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012: Գևորգյան Ռ., Հավաքական ուժ, Երևան, 2005: Գրիգորյան Ա., Հաղորտին գոյամարտի բովում, Ստեփանակերտ, 2012: Ջանիկյան Գ., Մահապարտներ, Երևան, 2002: Մկրտչյան Ա., Մաճկալաշենի քառուղիներով. Հուշապատում, Ստեփանակերտ, 2002: Արցախապատում, գիրք 3, Քարինտակի հերոսամարտը, (խմբագիրներ՝ Հովհաննիսյան Մ., Բաղրյան Վ.), Ստեփանակերտ, 2013: Ջորավարը (խմբագիր՝ Հակոբյան Հ.), Երևան, 2006: Կյանքի էջեր (կազմողներ՝ Գրիգորյան Պ., Գրիգորյան Գ., խմբագիր՝ Աբրահամյան Հ.), Երևան, 2011: Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX- XX դարեր, Երևան,2012: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Պետականության կայացումը դարերի սահմանագծում (կազմողներ՝ Ավետիսյան Հ., Աղաջանյան Մ., Անդրիասյան Լ., Արշակյան Ա., Ասրյան Հ., Բոյախչյան Գ., Եղիազարյան Ա., Սարգսյան Վ., Իսագուլյան Գ., Մելքոնյան Ա., Մինասյան Ս., Փանոսյան Ն., Սաֆրաստյան Ռ.), Երևան, 2009: Հավերժական ջրբաժան (խմբագիր և կազմող), Երևան, 2003: Арцах-Карабах, Энциклопедия, А-Е, Санкт-Петербург, 2007. Нагорный Карабах: Историческая справка, Ереван, 1988. Агаджанян М., Нагорно- Карабахский конфликт в свете заищты прав человека: политические и правовые аспекты, Ереван, 2009. Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и коментарии, том 1, Москва, 2008. О некоторых политико-прововых аспектах проблемы, сборник статей, Ереван, 1994. Нагорно-Карабахская республика: путь к вершинам.Степанакерт, "МИД НКР", 2001.

ենթագլուխների, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունն ըստ էության ատենախոսության մանրակերտն է, որտեղ հիմնավորված են թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության հիմնական նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը: Տրված են օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Կանայք Արցախյան գոյապայքարի սկզբնափուլում (1988-1991թթ.)», բաժանվում է երեք ենթագլուխների:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է «Կանանց գործունեությունը «վերակառուցման» ժամանակահատվածում», ամփոփ կերպով նկարագրվում է 1980-ականներին Ղարաբաղյան շարժումը և ընդհատակյա աշխատանքներին մասնակից կանանց գործունեությունը:

1980-ական թվականներին Արցախի հայությունը, ոգեշնչված արմատական փոփոխություններ ենթադրող «վերակառուցման» քաղաքականության հռչակմամբ, կրկին բարձրացրեց դեռևս 1920-ական թվականներից եկող Ղարաբաղյան հիմնահարցը[31]: ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելուն միտված քարոզչական աշխատանքները ակտիվացան, մանավանդ՝ 1986թ. ամռանը: Անհրաժեշտ է շեշտել, որ այդ ժամանակ էլ ազգային-ազատագրական պայքարի ուշագրավ ու կարևոր առանձնահատկություններից էր կանանց զանգվածային մասնակցությունը: Երբ խնդիր դրվեց վերականգնել պատմական արդարությունը և Արցախը վերամիավորել Մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին, հայ կինը հանդես եկավ ոչ միայն պայքարի գաղափարակիր ու կազմակերպիչ, հասարակական-քաղաքական գործիչ, այլև հայրենիքի պաշտպան: Կանանց մասնակցությամբ իրականացվող 'կիսաբացահայտ' գործունեությունը համակարգվում էր շարժման կազմակերպիչների կողմից:Նրանք սկզբում բնակչության հետ իրականացնում էին գաղափարական աշխատանքներ՝ գաղտնի թռուցիկների պատրաստում և տարածում: Այնուհետև նրանց մասնակցությամբ սկսվեցին ստորագրահավաքները, որը կատարվում էր խիստ գաղտնի: Այն իրականացվեց 1986-1987թթ. «Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու օգտին»[32]: Ապա սկսվեց հեռագրերի և հանրագրերի ուղարկումը:

Արցախը Հայաստանին վերամիավորելուն միտված քարոզչական աշխատանքներ էր կատարում նաև 1986թ. Ստեփանակերտում հիմնված

---

[31] Нагорный Карабах:Историческая справка, Ереван, АН ССР, 1988, стр.28:

[32] Նույն տեղում, էջ17:

«Արցախյան միություն» ընդհատակյա կազմակերպությունը[33], որի ղեկավար կազմում ընդգրկված էին նաև կանայք:

Հարկ է նշել, որ շարժման ընդհատակյա փուլում ազգային-ազատագրական գործընթացի մեջ ներառնված կանայք մեծապես նպաստեցին, որպեսզի շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի:

Երկրորդ ենթագլուխը՝ «Կանանց ներգրավվածությունը արցախյան շարժման սկզբնավորմանը (1988թ. փետրվար-դեկտեմբեր)» վերաբերվում է 1988թ. սկսված համաժողովրդական ու համազգային շարժման ընթացքում կանանց կատարած աշխատանքներին:

Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի ներկայացուցիչների պլանների ձախողումից հետո, փետրվարի 13-ին, առաջին անգամ Ստեփանակերտում անցկացվեց համաժողովրդական հանրահավաք: Այդ օրը թերևս դարձավ Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման ժամանակակից փուլի ելակետը: Բազմահազարանոց հանրահավաքում ելույթ ունեցող կանանց խոսքը ոգևորիչ էր և հավատ կար, որ ԼՂԻՄ-ը կվերամիավորվի մայր Հայաստանին:

1988թ փետրվարի 20-ի պատմական նստաշրջանի աշխատանքներին մասնակից 111 պատգամավորներից 49-ը կին-պատգամավորներ էին: Քննարկման թեման «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհրդի միջնորդությունը՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու» հարցն էր: Ելույթ ունեցած 45 պատգամավորներից 27-ը կին-պատգամավորներ էին: Նրանք համոզիչ փաստերով ցույց էին տալիս ԼՂԻՄ-ի 65 տարվա անցած դառը ճանապարհը, Ադրբեջանական ԽՍՀ կազմում գտնվելու պատճառով այդ ճանապարհին հայտնված ու երբեք էլ չլուծված հարցերը:

Արտահերթ նստաշրջանը ընդունեց որոշում, որտեղ մասնավորապես ասվում է. «…միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցին դրական լուծում տալու մասին»[34]: Այդ պատմական որոշումը ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Ցավոք, կենտրոնը արցախահայության նկատմամբ անհանդուրժողական դիրք գրավեց և ժողովրդական շարժումը որակեց «ծայրահեղական» և «նացիոնալիստական»:

Հայերին ահաբեկելու, արցախյան ազատագրական պայքարը ընկճելու նպատակով Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում ցեղասպանություն իրականացվեց, որին զոհ գնացին նաև կանայք: Բազմաթիվ ցույցեր, հանրահավաքներ տեղի ունեցան, որտեղ ելույթ ունեցող կանայք իրենց խոսքում անարգանքի սյունին գամեցին ոճիրը կազմակերպողներին ու պահանջեցին

---

[33] Դեռևս 1986թ. հուլիսին Ստեփանակերտում հիմնված ընդհատակյա կազմակերպությունը 1987թ. ստացավ «Արցախյան միություն» անունը:

[34] «Սովետական Ղարաբաղ», 1988, 21 փետրվարի թիվ 5:

կազմակերպիչներին և անմիջական հանցագործներին դատական պատասխանատվության ենթարկել:

Արցախի համար ծանր օրերին, կանայք, ընդգրկվելով հասարակական կազմակերպություններ, միություններ, կազմակերպում էին հանրահավաքներ, գործադուլներ և մի շարք աշխատանքներ տանում բռնագաղթած հայ ընտանիքներին օգնելու համար:

Որքան էլ հայ ժողովրդի համար ծանր էր 1988թ., այնուամենայնիվ, այն պատմության մեջ կմնա որպես զարթոնքի տարի, համազգային զարթոնք, որի ակունքներում, որպես ազգային ինքնության և ազատության արթուն պահապաններ, տղամարդկանց հետ համահավասար աներեր կանգնած էին նաև հայ կանայք:

Երրորդ ենթագլխում՝ «Կանայք ժողովրդական պայքարի վերելքի շրջանում (1989թ. հունվար-1991թ. դեկտեմբեր)», քննության է առնվում Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծմանը նպատակաուղղված համազգային շարժման ծավալման գործում կանանց դերակատարությունը:

Կենտրոնի որոշմամբ 1989թ. հունվարի 12-ից ԼՂԻՄ-ում ստեղծվեց Հատուկ կառավարման կոմիտե՝ ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ա. Վոլսկու գլխավորությամբ[35], որին վերապահվեց մարզի կառավարման լիազորությունները: Կոմիտեն լիազորված չէր բավարարելու արցախահայության պահանջը, դրա համար էլ այն ձախողվեց:

Արցախցիների ոտնահարված իրավունքները պաշտպանելու նպատակով կանայք իրենց մտահոգություններն էին արտահայտում Կոմիտեին ուղղված նամակներում, դիմումներում: Նրանց կողմից ամենուր հնչող բողոքները, դժգոհությունները՝ ուղղված կոմիտեին, հետապնդում էին մեկ նպատակ՝ վերջ դնել առկա անօրինականություններին:

Ժողովրդի բախտը տնօրինելու նպատակով 1989թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումար, որն ընտրեց Ազգային խորհուրդ[36]: Խորհրդի մեջ ընդգրկված կանանց (Նորա Ավագիմյան, Նախշուն Ավանեսյան, Սիլվա Բալայան, Էլմիրա Վահանյան, Լյուդմիլա Գրիգորյան, Զոյա Պետրոսյան, Գրետա Սահակյան, Լիդիա Սարգսյան) մասնակցությամբ համագումարում ընդունվեց որոշում, համաձայն որի մինչև ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի ու կուսակցության մարզկոմի գործունեության վերականգնումը՝ երկրամասի բարձրագույն գործադիր իշխանության լիազորությունները հանձնվում են Ազգային խորհրդին:Ադրբեջանի և Մոսկվայի իշխանությունների կողմից Ազգային խորհուրդը անօրինական համարվեց, որի բնական հետևանքը հանդիսացավ Արցախի դեմ հայահալած քաղաքականության ուժեղացումը:

---

[35] Նույն տեղում, 1989, 15 հունվարի:

[36] «Խորհրդային Ղարաբաղ», 1989, 18 օգոստոսի:

1990թ. հունվարի վերջին Ստեփանակերտում կանանց մասնակցությամբ հերթական բողոքի ցույց տեղի ունցավ՝ Բաքվում հունվարին կազմակերպված ջարդերի առիթով: Այդ ողբերգական իրադարձությունների հորձանուտում հայտնված կանանց վկայություններում բազմաթիվ են փաստերը ջարդարարների վայրագությունների մասին:

Երկրամասում տիրող լարվածությունը ևս մեկ անգամ ստիպեցին Արցախի մի խումբ կանանց 1990թ. հոկտեմբերին հերթական կոչով դիմել աշխարհի կանանց[37]: Պատմելով արցախահայության ձգտումների և անզիջում պայքարի մասին՝ նրանք կոչ էին անում Արցախից հանել Ադրբեջանի ապօրինի կազմկոմիտեն, բացել Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհները և ապահովել ռադիոհեռուստատեսության նորմալ աշխատանքը:

Արցախում տիրող ծանր իրավիճակի, սանձազերծված բռնությունների մասին իրենց վրդովմունքը արտահայտեցին Գալինա Ստարավոյտովան, Ելենա Բոները, Իննեսա Բուրկովան, Գալինա Նույկինան և շատ ուրիշներ:

Այդ օրերին ակտիվ գործունեություն էին ծավալել մի շարք հասարակական կազմակերպություններ, միություններ, որոնց շարքերում ակտիվ գործունեություն էին ծավալել կանայք: Դրանց թվում էին «Գետաշեն», «Արցախ» հայրենակցական, բարեգործական միությունները, «Մայրության» հիմնադրամը, «Գթություն», «Զինվորի մայր» հասարակական կազամակերպությունները:

Օգտագործելով հարմար պահին ընձեռված հնարավորությունը և օգտվելով սահմանադրական իրավունքից, ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում, ԽՍՀՄ ներպետական օրենսդրության պահանջներին և միջազգային իրավական նորմերին համապատասխան, Ադրբեջանի Հանրապետության կողքին ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ, ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան հրավիրվեց, որտեղ որոշվեց. «Ընդունել ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և սահմանակից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին հռչակագիր»[38]: Նստաշրջանում բոլոր ելույթ ունեցողները, այդ թվում Լիդիա Սարգսյանը և Տատյանա Սոբոլեվան պաշտպանեցին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հանրապետություն հռչակելու առաջարկությունը:

Հարկ է նշել, որ կանայք իրենց ուրույն տեղն ու դերն ունեցան նաև հայ ժողովրդի համար կարևոր իրադարձության՝ ԼՂՀ կազմավորման գործընթացին, որից հետո՝ աշնանը լայնամասշտաբ ռազմական գործողություններ սկսվեց:

---

[37] «Ուրբաթ», 1990, 9 հոկտեմբերի:

[38] Աբրահամյան Հ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991թ. օգոստոս-1992թ. հունվար) փաստաթղթեր, 92 էջ:

Երկրորդ գլուխը «Կանանց մասնակցությունը ռազմական գործողություններին (1991թ. դեկտեմբեր-1994թ. մայիս)», նույնպես բաժանված է երեք ենթագլուխների:

Առաջին ենթագլխում՝ «Արցախի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան շրջանների պաշտպանական մարտերում», ներկայացվում է կին-ազատամարտիկների մարտական ուղին Արցախի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերում:

1991թ. աշնանը Ադրբեջանի կողմից սկսված զինված ագրեսիան Լեռնային Ղարաբաղի Հանրպետության նկատմամբ արտահայտվում էր բացահայտ զինված ներխուժումներով՝ տարածքները զավթելու, հայ ազգաբնակչությանը բռնի տեղահանելու նպատակով: Ազգային-ազատագրական պայքարի խորացմանը զուգահեռ, օրեցօր ավելի ու ավելի էին ծավալվում ռազմական գործողությունները, որի ընթացքում էլ ստեղծվեց պաշտպանական համակարգը:

1991թ. վերջերին և 1992թ. սկզբներին ԼՂՀ տարածքում կազմավորվեցին 10-ից ավելի վաշտեր ու դասակներ[39]: Դա հնարավորություն տվեց հակամարտ ուժերի անհավասարության պայմաններում անհամեմատ կազմակերպված իրականացնել Արցախի ինքնապաշտպանական մարտերը: Պաշտպանական մարտերին միացան հարյուրավորն կին-կամավորականներ: Նրանք, մասնակցելով մարտական գործողություններին, տղամարդ զինվորների հետ կիսեցին պատերազմի բոլոր դժվարությունները:

Համալրվելով «Գարեգին Նժդեհ» (Զարուհի Բաղալյան), «Մայիս» (Գալյա Գյուրջյան, Լորետա Գյուրջյան), «Կարս» (Նվարդ Դուդուկյան), «Ադանա» (Ալվարդ Կոստանդյան), «Սիսակ» (Մարիետա Խաչատրյան), «Տոռոզյա»ն և «Նաիրի» (Սուսաննա Կոստանդյան), «Անահիտ» (Անահիտ Մարտիրոսյան), «Աղբյուր Սերոբ» (Նաիրա Սահակյան), «Եղնիկներ» (Արմինե Նալբանդյան), «Խաչակիրներ» (Անժելա Զալյան), «Զորավար Անդրանիկ» (Մարիետա Սարգսյան) կամավորական ուժերի, ինչպես նաև «Արծիվ 24» գումարտակի (Նունե Աբրահամյան, Անահիտ Լոպոյան), Ղազանչիի (Ալվարդ Շեկյան), Մանաշիդի (Զոյա Մարտիրոսյան), Խրամորթի (Լենա Շամիրյան), Մաղավուզի(Անժելա Նանագյուլյան), Արմավիրի (Լոլիտա Վարդանովա), Սևանի (Անժելա Հակոբյան) ջոկատների կազմի մեջ, կանայք պատերազմի ողջ ընթացքում մասնակցեցին Արցախի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան շրջաններում տեղի ունեցող ռազմագործողություններին, մարտադաշտից վիրավորների տարհանման և բուժսպասարկման աշխատանքներին[40], որի ժամանակ նրանցից ոմանք զոհվեցին և վիրավորվեցին՝ անձնական օրինակով ապացուցելով, որ հայ կինը կարող է լինել նաև հայրենիքի զինվոր:

---

[39] Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Երևան ,2001, էջ 27:

[40] «Մարտիկ», 1995, 26 հունվարի - 1փետրվարի, թիվ 7:

Կանանց մի մասն էլ մնալով թիկունքում՝ ոչ պակաս կարևոր դեր ունեցան. նրանց ուսերին էր դրված ընտանիքի հոգսը, ինքնապաշտպանական ուժերին սնունդ մատակարարելը, մարտնչողներին հույս ու հավատ ներշնչելը:

Երկրորդ ենթագլխում՝ «Ստեփանակերտի ինքնապաշտպանական և Շուշիի ու Քաշաթաղի ազատագրական մարտերում» քննության է առնված կանանց մասնակցությունը Շուշիի ազատագրմանը, Լաչինի, Զանգելանի, Կուբաթլուի ազատագրական և Ստեփանակերտի ինքնապաշտպանական մարտերին:

Յուրաքանչյուր պատերազմում ի հայտ են գալիս վառ անհատականություններ: Արցախյան ազատամարտում այդպիսի անհատականություն դարձավ ղարաբաղյան շարժման գործիչ, Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի Ժաննա Գալստյանը: Լինելով ազգային-ազատագրական շարժման նվիրյալներից մեկը, նա մասնակցեց գոյամարտի գրեթե բոլոր կարևոր ռազմագործողություններին[41]:

Պատերազմը հաղթական ավարտին հասցնելու և նորաստեղծ հանրապետության կայացման գործում առանձնահատուկ նշանակություն ունեն Շուշիի ազատագրումը և շրջափակման ճեղքումը: Այդ կարևոր իրադարձությունների բովում էին Անուշ Ավագյանը, Հասմիկ Բաղդասարյանը, Մանուշակ Սարգսյանը, Ֆլորա Հակոբջանյանը, Զուխրա Հայրապետյանը, Սվետլանա Աբրահամյանը, Տանյա Առստամյանը, Մելսիդա Հարությունյանը, Աղավնի Սահակյանը, Համեստ Օհանյանը, Մարինե Դուլյանը, Շուշանիկ Աբրահամյանը[42] և շատ ուրիշներ, որոնց մի մասը, որպես ազատամարտիկ, միացան ինքնապաշտպանական ուժերին, իսկ մի մասը կամավոր համալրեց բժշկական ջոկատը, որն ուներ մի նպատակ՝ վիրավորներին ցուցաբերել առաջին բժշկական օգնություն հենց մարտի դաշտում:

1992թ. աշնանը ստեղծվեց կանանց վաշտ, որն այդ պահից մինչև հրադադար մնաց ռազմի դաշտում:

Արցախյան ազատամարտում առանձնակի եռանդ ցուցաբերեցին նաև զինվորական հոսպիտալի կին բուժաշխատողները: Նրանք պատերազմի տարիներին անհնարինը դարձնում էին հնարավոր՝ փրկելով հարյուրավոր զինվորների կյանքեր:

Երրորդ ենթագլուխը՝ «Հարավ-արևելյան շրջանների մարտական գործողություններին», վերաբերվում է Ասկերանի, Մարտունու, Հադրութի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին միացած կանանց:

1992թ. հունիսի առաջին տասնօրյակում նկատելիորեն ակտիվացան ադրբեջանական ուժերի կողմից ռազմագործողությունները Արցախի Հանրապետության սահմանագծի ողջ երկայնքով: Կորուստները, անկասկած, ավելի մեծ կլինեին, եթե իրենց բարձրության վրա չլինեին հայկական գյուղերի ինքնապաշտպանական ուժերը:

---

[41] Կինը և զինված հակամարտությունը: Պատերազմ Ղարաբաղում, էջ50-52:

[42] «Մարտիկ», 2004, 10 մայիսի թիվ 12:

Կանայք, միանալով Ասկերանի, Մարտունու, Հադրութի ինքնապաշտպանական ջոկատներին, մասնակցեցին նրանց վարած բոլոր ռազմական գործողություններին:

Արցախահայությունը, ի մի բերելով իր ներուժը, Հայաստանի Հանրապետության և սփյուռքահայության աջակցությամբ իրեն պարտադրված պատերազմում հասավ հաղթանակի: Այս ամենին մասնակից դարձած կանայք ևս գիտակցում էին, որ տեսականորեն անհնար էր դիմակայել հակառակորդի ահռելի ուժերին, որի համար էլ դեռևս նախապատերազմյան տարիներին կամավոր միացան հայ ինքնապաշտպանական ուժերին:

Արդարև, հերոսություն էր անտրտունջ դիմակայել 1992-1994թթ. զրկանքներին՝ ռմբակոծություններին, ճակատից եկող հաղորդագրություններին, նկուղներում ապրելուն, ցուրտ ու մութ գիշերներին, հացի ու ջրի սրտամաշուկ հերթերին: Որքան էլ պատմությանը քաջատեղյակ լինենք, առեղծված է մնում հայ կնոջ տոկունությունը, որ թերևս դեռ շատ կզբաղեցնի ղարաբաղյան հակամարտության ուսումնասիրությանը լծված մասնագետներին:

Եզրակացություններ: Նպատակ ունենալով գիտական ուսումնասիրության հարթություն բարձրացնել Արցախի ազգային-ազատագրական պայքարին կանանց մասնակցությունը, սույն աշխատանքում փորձել ենք վերլուծել կանանց տեղը և դերը հակամարտության մեջ, բացահայտել նրանց կատարած աշխատանքը: Թեմայի համալիր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացությունների.

- Արցախահայության անցած ժամանակի պատմությունը համոզում է, որ Ադրբեջանի կողմից իրագործված խտրականությունը իրականացվել է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, ինչը հայ ազգաբնակչությանը ստիպել է դիմել վճռական քայլերի, ու խնդիր դրվել վերականգնել պատմական արդարությունը՝ Արցախը վերամիավորել Մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին:

Գոյապայքարի այս նոր փուլում մարդիկ վերստին ճաշակել են մայրության ու կանացիության կշռադատված ու խոհեմ վարվեցողության պտուղները: Հանապազօրյա կենցաղային հոգնատանջ աշխատանքներում, հաճախ առավել շատ աշխատանքային մասնակցությունը հանրային տնտեսությունում, նրանց մեջ չեն խամրել անձնուրացություն դրսևորելու նրանց կարողությունը՝ հանուն արդարության հաղթանակի, և հայ կինը գնացել է առճակատման:

Պատմական իրողությունը վկայեց, որ Արցախի ժողովրդի ազատության նվիրական փափագն ու վճռական պահանջն իրականություն կդառնան միայն պայքարի ճանապարհով, պայքար, որին ներկա և մասնակից կինն ապացուցեց, որ թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես կարող է դիմակայել հակառակորդի վայրագություններին ու մնալ անկոտրում, հանուն հայրենիքի պաշտպանության իր ուսերին տանել ծանրության բեռի մի մասը:

- Համազգային պայքարը ճնշելու նպատակով Ադրբեջանի կողմից սանձազերծվեցին վայրագ բռնություններ, որոնց առթիվ բողոքի ձայն

բարձրացնող կանանց հասարակական կազմակերպությունները, կին քաղաքական, հասարակական գործիչները, դատապարտելով Արցախում տեղի ունեցող անպատիժ բռնարարքները, կոնկրետ քայլերի դիմեցին՝ պահանջելով արդարացի լուծում տալ հիմնախնդրին: Այդ ուղղությամբ նրանց ծավալած գործունեությունը, կատարած հայտարարությունները, տարբեր ատյաններին ուղղված գրավոր դիմումները նույնպես նպաստեցին հիմնախնդրի միջազգայնացմանը: Այդ պայքարում նրանք աննահանջ էին:

- Միջազգային ասպարեզում արցախահայությանը սատարող օտարազգի կին գործիչների և մտավորականների անգնահատելի գործունեության շնորհիվ Արցախում առկա իրավիճակը հայտնի դարձավ աշխարհի տարբեր երկրներում: Այս իրողությունն ապացուցեց, որ կինն իր պահանջներում սկզբունքային է և կարող է լինել անզիջում: Պատերազմի օրերին և հետագայում նրանք իրենց բարեգործական նախաձեռնություններով կարողացան նպաստել Արցախի սոցիալ-տնտեսական կյանքի առաջընթացին: Առ այսօր էլ շարունակվում է նրանց այցելություններն Արցախի Հանրապետություն: Այդ կանանցից ոմանք նույնիսկ արժանացան ԼՂՀ պատվավոր քաղաքացու կոչման:
- Այն, որ կինը կարող է մեծ դեր խաղալ սեփական պետականության ստեղծման գործում՝ ապացուցեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման գործընթացը: Պետական շինարարության ու զինված ուժերի կազմավորման գործընթացներում, այն էլ զինված ընդհարումների և տարաբնույթ մարտերի պայմաններում, հայ կինը կանգնած էր իր ամուսնու, եղբոր և որդու թիկունքում ու կողքին: Կանանց անմիջական մասնակցությունը համազգային շարժմանը և ռազմագործողություններին ավելի տեսանելի են դարձել հակառակորդի դեմ մղված պայքարը և տարած հաղթանակը:
- Դեռևս 1988թ. իրադարձությունների հորձանուտում ծնված ինքնապաշտպանության գաղափարը զարգացող դեպքերի ճնշմամբ աստիճանաբար դարձավ առարկայական անհրաժեշտություն: ԼՂՀ սահմանների ու խաղաղ բնակավայրերի վրա մշտական սպառնալիքը, հրթիռահրետանակոծությունները և ինքնապաշտպանական ուժերի մարտավարական խնդիրները հրամայաբար պահանջում էին վնասազերծել հակառակորդի կրակակետերը և հանրապետության շուրջ ստեղծել անվտանգության գոտի: Այդ նպատակով պլանավորված ու ձեռնարկված խոշոր ռազմագործողություններին մասնակից կանայք փայլուն կերպով կատարեցին իրենց առջև դրված խնդիրները: Մտնելով Հայաստանում և Արցախում տարերայնորեն կազմավորված առաջին կամավորական և աշխարհազորային ինքնապաշտպանական ջոկատների շարքերը՝ նրանք ամբողջ պատերազմի ընթացքում ցույց տվեցին, որ կինն էլ կարող է մարտադաշտում լավ զինվոր, հայրենիքի պաշտպան լինել:
- Արցախյան ազատամարտը համոզում է, որ հայ կինն իր արիությամբ կարող է մեծ դեր խաղալ հայրենիքի պաշտպանության և նրա զարգացման գործում: Այսօր էլ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակում քիչ չէ կնոջ ներդրումը ռազմական ոլորտում: Այդ մասին է փաստում նաև այն հանգամանքը,

որ ներկայումս ՀՀ և ԼՂՀ զինված ուժերում ներգրավված են մեծ թվով կին զինծառայողներ: Զինված ուժերում կանայք ստանձնում են ոչ միայն վարչական աշխատանքներ, այլև նրանց շարքերում կան տարբեր ստորաբաժանումների պետեր, հրամանատարներ: Ավելին՝ կան կանայք, ովքեր ծառայում են հատուկ նշանակության գնդերում:

- Բանակցային գործընթացն առայժմ շոշափելի արդյունքներ չի տվել Ադրբեջանական կողմի ոչ կառուցողական քաղաքականության պատճառով: Ադրբեջանը, չհամակերպվելով պատերազմի արդյունքում հաստատված իրողության հետ, շոշափում է արյամբ գծված սահմանների հարցը, դա այն դեպքում, երբ թե պատերազմը և թե ԼՂՀ-ի դեմ ագրեսիան նախաձեռնվել են հենց այդ երկրի կողմից: Գտնվելով մի իրավիճակում, որտեղ պատերազմի վերսկսման հավանականությունը բարձր է, շատ կարևոր է ուշադրություն դարձնել ռազմական ոլորտում, հատկապես զինված ուժերում կնոջ դերին ու նշանակությանը: Նպատակահարմար է հայ կանանց ուժը լայնորեն օգտագործել հայկական զինված ուժերում՝ հավատացած լինելով, որ հայ կնոջ պատիվն ու հեղինակությունն աներկբա մեծապես կնպաստեն հայ զինվորի ոգու հարաճուն ամրապնդմանն ու հանուն հայրենիքի անվտանգության նրա աներեր պատրաստակամության ապահովմանը:

Ատենախոսի հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Արցախի կանայք 1988թ. հայոց համազգային զարթոնքում, «Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես», Երևան, 2014, Մաս Երրորդ, էջ 358-368:
2. Կանայք 1988-1991թթ. Արցախի հարավ-արևելյան շրջանների ազգային-ազատագրական պայքարում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2014, թիվ 3-4, էջ 135-142:
3. Կանանց մասնակցությունը արցախահայության ազգային-ազատագրական պայքարի պատերազմական փուլին (1991-1994թթ), ԱրՊՀ «Հայագիտական ուսումնասիրություններ», Ստեփանակերտ, 2014, թիվ 5, էջ 136-149:
4. Կանանց մասնակցությունը Հյուսիսային Արցախի ինքնապաշտպանությանը (1988-1991), ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Գիտություն», Երևան, 2015, թիվ 2, էջ 256-265:
5. Կանայք Շահումյանի, Մարտակերտի, Քարվաճառի պաշտպանական մարտերում (1992-1994թթ.) , ՀՀ ԳԱԱ «Կանթեղ», Երևա,ն 2015, թիվ 4 (65), էջ 64-75:
6. Կանանց մասնակցությունը Արցախյան շարժման ընդհատակյա փուլին (1986-1988թթ.), ՀՀ ԳԱԱ «Կանթեղ», Երևան, 2016, թիվ 1 (66), էջ 52-64:

УЧАСТИЕ ЖЕНЩИН В АРЦАХСКОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ ВОЙНЕ
(1988-1994гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 17-ого июня 2016г. 14°°, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Основной цель исследования проанализировать роль женщин в Карабахском конфликте,выявить им работы,об общить результаты и дать их историческое значение.

Диссертация состоит из введения,двух глав, которые разделены на три заголовка, заключений,использованных первоисточников и списка литературы.

Во введении обоснованы значимость и актуальность темы, указаны поставленные перед автором цели и задачи, представлена научная новинка, дана теория первоисточников и литературы, касающихся проблем.

Первая глава “Женщины в начальном этапе Арцахской освободительной войны(1988-1991гг.)” посвящена патриотической деятельности проделанной женщинами в период подпольного этапа Карабахского движения,народной борьбы и новой волны волнений.

В 1980-х экономический и политический глубокий кризис в СССР заставил осуществить в стране экономические и политические реформы,что не только не улучшилась экономическая ситуация в СССР,но и в конце 1980-х годов ухудшилось социально-экономическое положение страны. В ходе реконструкции, национальным вопросам придавали уникальную ценность и они выдвинулись на первое место в Арцахе, где борьба,в целом, не перестала.

Пропагандистские работы, направленные на воссоидинение НКАО с Арменией активизировались, особенно, летом 1986 года.

Примечательной и важной особенностью национально-освободительной борьбы являлось массовое участие женщин.

Когда была поставлена задача восстановить историческую справедливость и воссоединить Арцах к матери-родине Армении ,армянская женщина выступила не только единомышленником и организатором борьбы, общественно-политическим деятелем,но и защитником родины.

Рассматривая роль женщин в период с 1985 по 1988гг. года,однозначно можно сказать,что они проявили особый энтузиазм и участие и сыграли большую роль в общенациональном деле. Анализ событий показал,что с того момента, когда в СССР в результате изменений, обусловленных политикой <<перестройки>>, начался новый этап национально-освободительной борьбы арцахцев. Женщины, учавствуя этом деле, еще на подпольном этапе вошли в состав инициативных групп и способствовали таму чтобы движение превратилось в всенародную борьбу.

В подпольном этапе женщины, включенные в национально-освободительный процесс, значительно способствовали тому,чтобы движение превратилось в общенародную борьбу.

В упомянутый период их деятельность, в основном, проявилось в агитационных работах,благодаря которым подпольное движение превратилось в общенародное.

Во второй главе “Участие женщин в военных действиях, (декабрь 1991 г.-май 1994г.)” представлен боевой путь женщин-участниц Карабахской войны.

С декабря 1991 года начавшаяся вооруженная агрессия по отношению Нагорно-Карабахской республики со стороны Азербайджана, высказывалась открытыми вооруженными вторжениями,с целью захвата территорий, насильственной депортации армянского населения.

Параллельно с углублением национально-освободительной борьбы,с каждым днем все более и более распространялись военные действия,в ходе которого создалась система обороны. В результате,параллельно с боевыми действиями, начали формироваться вооруженные силы РА и силы самообороны НКР (в дальнейшем армия обороны НКР).

Это позволило в неравных условиях противо-борствующих сил, несравненно организованно осуществить оборонительные бои Арцаха. К оборонителным боям присоединились сотни женщин-добровольцев. Они, участвуя в боевых действиях, делили тяготы войны с военнослужащиами.Они своей деятельностью доказали, что во имя защиты родины готовы на своих плечах нести часть этого тяжолого бремени.

Некоторые из них погибли и были ранены на личном примере доказывая,что женщина может быть и солдатом родины.

Другая часть женщин, оставаясь в тылу, сыграли не менее важную роль:на их плечах была возложена бремя семьи, вселение в сражающися веры и надежды.

В выводах приведены основные результаты и заключения диссертации.

Avanessyan Iskuhi Nikolay

The Participation of the Women in Artsakh Struggle (1988-1994)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on June 17, 2016, 14°°at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The aim of the investigation is to analyze the role of women in Karabakh antagonism, to reveal the work they have done, to sumarrize the results and to give the historical significance.

The dessertation consists of the introduction, two chapters, both of which are divided into three subtitles, summaries and used sources and literature.

The introduction is based on the importance and modernity of the theme, the goals and objects are pointed, the scientific novelty is presented, and it is given the theory and literature concerning the problem.

The first chapter, which is titled " The Women in the initial period of the Artsakh Struggle" (1988-1991), is devoted to the secret periodof Karabakh movement, national struggle and to patriotic activities of the women in the new exciting period.

In the 1980s economical and political crisis in the USSR caused to realise economical and political reforms, whish didn't improve the USSR economical condition, moreover, in the end of 1980s the social-economic condition of the country became worse.

During the "Perestroyka" a specific value was given to national problem and it was pushed to the foreground in Artsakh, where in general the struggle didn't stop.

The preaching for the reunion of the NKAR (Nagorno Karabakh Autonomous Region) to Armenia became active in the summer of 1986.

One of the notable and important characteristics of the national- liberating struggle is the massive participation of the women.

For restoring historic justice and for the reunion of Artsakh to the Motherland to Soviet Armenia, the armenian woman appeared not only as an ideological and organiser, social – political figure, but also as a defender of the Motherland.

In the secret period of national liberating process, the women favoured the movement turned into nationwide struggle.

By studying the role of women from 1985 -1988 one can say unambiguously that they showed special energy and participation and had a great role in the national movement. The analyses of the events showed that since then when the new stage of the Artsakh national liberation struggle began connected with the changes of "reconsruction" policy in the USSR, the women participating in it were involved in the secret stage of the initiative groups and assisted the movement to become a national struggle.

In this period their activities were mainly expressed in the preaching activities thanks to which the secret movement became national.

The second chapter, which is titled "The Participation of the Women in the Military Actions (from December of 1991 to May of the 1994) introduces the fighting path of the women participated in the Artsakh Liberation War.

From December of 1991 the Azerbaijan's armed aggression against Nagorno Karabakh Republic was expressed by obvious armed invasions for occupying the areas, for the forced moving or the armenian population.

Along with the deepening of the national – liberating struggle, the military actions developed more and more, and so the defense system was formed.

As a result , along with the military actions, the RA Military Forces and the NKR Self – Defence Forces (afterwards the NKR Military Army) were formed. That gave an opportunity of the armed forces to fulfil Artsakh self – defence fights much more organised.

Hundreds of women – volunteers joined the defence fights. Participating the military actions, they shared with men- soldiers all the difficulties of the war.

They proved by their activity that they are ready to bear on their shoulders a part of the whole weight of the burden for the sake of homeland's protection.

Some of them were killed and wounded proving by personal example that an armenian woman can also be a soldier for her homeland.

Staying in the back the women had no less important role, they had to take care for their families, to supply food to self – defence forces, to inspire hope and belief.

In the summaries it is brought to conclusion the main results of the dessertation.